ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թվականի հունիսի 6-7-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը՝

Ժաննա Զաքարյան

2.Զբաղեցրած պաշտոնները՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2022 թվականի հունիսի 6-7-ը

4.Հրավիրող կողմը՝

Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

5.Գործուղման նպատակը՝

Հայաստանի Հանրապետության կողմից մշակվող «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի քննարկում աշխատանքային խմբի անդամների հետ՝ ընդհանուր մոտեցումների փոխհամաձայնություն, աշխատանքային խմբի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ընդհանրացում և քննարկում, ինչպես նաև նախագծի հանրային քննարկման համար հետագա ընթացքի ապահովման վերաբերյալ որոշման կայացում:

6.Քննարկված թեմաները

Աշխատանքային խմբի խորհրդակցության ընթացքում քննարկվեցին «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի ընդհանուր դրույթների, կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի, ստանդարտների մշակման ծրագրի, ԱՏԳ ԱԱ ծածկագրերի ցանկի, տեխնիկական կանոնակարգի օբյեկտ հանդիսացող արտադրանքի շրջանակի վերաբերյալ հարցերը, ընդհանուր մոտեցումները: Միաժամանակ փոխհամաձայնվեցին «ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և ՌԴ «Ծխախոտի և ծխախոտային արտադրանքի Համառուսաստանյան

գիտահետազոտական ինստիտուտի» (ՖԳԲՆՈՒ ՎՆԻՈՒՏՏԻ) միջև հուշագրի դրույթների բովանդակության և դրա ստորագրման հետ կապված հարցերը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատանքային խմբի խորհրդակցության ընթացքում ելույթ ունեցան աշխատանքային խմբի ղեկավար՝ որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետը, հայկական կողմի աշխատանքային խմբի անդամները, Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման դեպարտամենտի ներկայացուցիչները (աշխատանքային խմբի անդամներ), Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների աշխատանքային խմբի անդամները և ոլորտային մասնագետները: Խորհրդակցության շրջանակներում քննարկվեցին փաստաթղթին առնչվող խնդրահարույց սկզբունքային և ընդհանրական մոտեցում պահանջող հարցերը՝ ըստ անհրաժեշտության նախագծում կատարելով նաև բովանդակային փոփոխություններ:

Քննարկումների արդյունքում՝ ԵՏՀ խորհրդի 20.06.2012թ. N 48 որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ որոշվեց որպես տվյալ տեխնիկական կանոնակարգը մշակող մարմին հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կազմել տվյալ խորհրդակցության արձանագրությունը, ամփոփել «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագիծը, դրա վերաբերյալ ստացված հատուկ կարծիքների հետ միասին փաթեթը ներկայացնել Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողովին՝ նախագիծը հանրային քննարկմանը ներկայացնելու հարցը 2022թ. հուլիսի 14-ին Խորհրդատվական կոմիտեի նիստի օրակարգում ներառելու նպատակով:

Այսինքն, սույն խորհրդակցության արդյունքում ապահովվեց 2022թ. մարտի 31-ի Խորհրդատվական կոմիտեի խորհրդակցության արձանագրության 3-րդ կետով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարված միջոցառման կատարումը:

Խորհրդակցության շրջանակներում ձեռք բերվեց պայմանավորվածություն «ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և ՌԴ «Ծխախոտի և ծխախոտային արտադրանքի Համառուսաստանյան գիտահետազոտական ինստիտուտի» (ՖԳԲՆՈՒ ՎՆԻՈՒՏՏԻ) միջև հուշագրի ստորագրման գործընթացը: Հայկական կողմից ստորագրված հուշագիրը փոխանցվեց ռուսական կողմին՝ այն ևս ստորագրելու նպատակով:

Գործուղման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունների և որոշումների մասին տեղեկատվությունը ներկայացվեց նախարարության ղեկավարությանը և աշխատակիցներին:

8.Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ժաննա Զաքարյան

09.06.2022թ.